# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի 10.06.2016 թ. նիստի

---

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետ՝ Ա. Ղահրամանյանի

ՀՀ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ա. Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության վարչության պետ՝ Վ.Մկրտչյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ՝ Հ.Հարությունյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ՝ Ա. Պողոսյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության պետ՝ Ա.Այվազյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
քաղաքաշինության վարչության պետ՝ Կ.Դանիելյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության գյուղատնտեսության բաժնի
պետ՝ Մ.Սարիբեկյանի

Գյուղատնտեսության աջակցության
Արմավիրի մարզային կենտրոնի տնօրեն՝ Լ.Ալեքսանյանի

ՀՀ Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած համայնքների ղեկավարների

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2016թ. մայիսի 12-ին,18-ին,23-ին,հունիսի 4-ին և 5-ին ուժեղ քամու ուղեկցությամբ ՀՀ Արմավիրի մարզի վարչական տարածքի 26 համայնքներում տեղացած կարկուտի հետևանքով գյուղացիական տնտեսություններին պատճառված վնասների վերաբերյալ համայնքային հանձնաժողովների կողմից կազմված և ցուցակային կարգով մարզային հանձնաժողով ներկայացված ակտերը քննարկելու և համաձայնեցված ակտերը սահմանված ընթացակարգով արտակարգ իրավիճակների հետևանքով

*պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողով ներկայացնելու մասին*

*/ Ա.Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ,*

*Ա. Այվազյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի*

*աշխատակազմի գյուղատնտեսության*

*և բնապահպանության վարչության պետ/*

*Մինչև ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանի ամփոփիչ ելույթը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը ներկայացրեց,որ 2016թ. մայիսի 12-ին,18-ին,23-ին,հունիսի 4-ին և 5-ին քամու ուղեկցությամբ տեղացած կարկուտից( արդեն ավարտված ուսումնասիրությունների արդյունքներով) տուժել են ՀՀ Արմավիրի մարզի 26 գյուղական համայնքների՝ Լուկաշին,Նորավան,Արգինա, Բագարան, Արմավիր ,Այգեշատ (Արմավիրի տարածաշրջան), Տանձուտ , Արտաշար ,Արևիկ ,Զարթոնք,Բերքաշատ, Շենավան, Գետաշեն, Նալբանդյան, Նոր Արտագերս, Արգավանդ, Ջանֆիդա, Փշատավան, Սարդարապատ, Արազափ,Երասխահուն , Եղեգնուտ, Դաշտ, Ամբերդ, Դողս և Այգեշատ (Էջմիածնի տարածաշրջան) ընդհանուր թվով 6795 հողօգտագործողներ:*

*ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը ներկայացրեց նաև վերը նշված ժամանակահատվածում ուժեղ քամու ուղեկցությամբ տեղի ունեցած կարկտահարության հետ կապված մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության իրականացրած աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:Նա միաժամանակ նշեց նաև,որ ՀՀ Արմավիրի մարզպետի հանձնարարությամբ համայնքների ղեկավարների կողմից սահմանված կարգով թարմացվել էին համայնքներում գործող համապատասխան հանձնաժողովների կազմերը, արձանագրվել պատճառված վնասները և ներկայացվել մարզպետարան, իսկ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետը մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության միջոցով կազմակերպել և վերահսկել է նշված գործընթացները:Հանձնարարականի կատարման նպատակով համայնքներ են*

այցելել նաև գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բոլոր աշխատակիցները: Համայնքների ղեկավարներին առաջարկվել էր թարմացվող հանձնաժողովների կազմերում ընդգրկել նաև համայնքապետարանների աշխատակիցներին, համայնքի ավագանու անդամներին, համայնքը սպասարկող ՋՕԸ-ների տեղամասի պետերին, ինչպես նաև հողօգտագործողներին:

Ներկայումս արդեն հանձնաժողովները ուսումնասիրել ու ակտավորել են կարկտի և ուժեղ քամու հասցրած վնասները և կազմել համապատասխան ցուցակներ, որտեղ նշվել է հողօգտագործողի անուն, ազգանունը, վնասված հողատարածքի չափը , վնասվածության աստիճանը՝ ըստ մշակաբույսերի և այլն: Ցուցակները ներկայացվել են մարզպետարան և մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կողմից դրանք ամփոփվել են և համապատասխան ձևաչափով ներկայացվել են << Արմավիրի մարզպետին(կցվում է):Դրանք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի որոշմամբ կներկայացվեն նաև << գյուղատնտեսության և տարածքային կառավարման և զարգացման նախարարություններ՝համապատասխան ընթացք տալու նպատակով: Այն հարցադրմանը, թե ինչպես է որոշվել մշակաբույսերին հասցված վնասի չափը (տոկոսը), պարզաբանվեց , որ բացակայում է նշված դեպքերում վնասների հաշվարկման մշակված և գործող հստակ մեթոդիկա, ուստի հանձնաժողովները,<< գյուղատնտեսության նախարարության մասնագետների խորհրդատվությամբ, վնասի չափերը հաշվարկել են դիտողական՝ (վիզուալ), այսինքն՝մոտավոր ձևով:Ի դեպ,մարզի համայնքներում կարկտահարության արդյունքում կատարված գնահատումներով՝ եթե վնասի չափը եղել է մինչև 30 տոկոս, հողօգտագործողների հետ համաձայնեցնելով,դրանք չեն արձանագրվել,հասկանալի պատճառներով հնարավոր պետական աջակցության ծավալները չավելացնելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը օրակարգային հարցի առնչությամբ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նիստի մասնակիցներին տեղեկացրեց,որ համայնքային հանձնաժողովներն ,իրոք, ավարտել են ընդհանուր թվով 26 համայնքներում ուժեղ քամու ուղեկցությամբ տեղի ունեցած տևական կարկտահարության հետ կապված համապատասխան ակտերի և ցուցակների կազմման աշխատանքները,որոնք ամփոփվել են <<

Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունում:Նա միաժամանակ նշեց,որ անհրաժեշտ է համայնքներից մարզային հանձնաժողով ներկայացված և համաձայնեցված ակտերը և ամփոփ տեղեկատվությունը սահմանված ընթացակարգով ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման և գյուղատնտեսության նախարարություններ՝ համապատասխան ընթացք տալու նպատակով:

## Հանձնաժողովը որոշում է՝

**1.2016թ. մայիսի 12-ին,18-ին,23-ին,հունիսի 4-ին և 5-ին ուժեղ քամու ուղեկցությամբ ՀՀ Արմավիրի մարզի վարչական տարածքի 26 համայնքներում տեղացած կարկուտի հետևանքով գյուղացիական տնտեսություններին պատճառված վնասների վերաբերյալ համայնքային հանձնաժողովների կողմից կազմված և ցուցակային կարգով մարզային հանձնաժողով ներկայացված,քննարկված և համաձայնեցված ակտերն ու ամփոփ տեղեկատվությունը(կցվում է) համապատասխան ընթացք տալու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման,ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություններ՝ արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովին:**

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Քարտաշյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Դ.Դավթյան

## Ցուցակ

2016թ. մայիսի 12-ին, 18-ին, 23-ին, հունիսի 4-ին և 5-ին ՀՀ Արմավիրի մարզի վարչական տարածքում տեղացած կարկուտի հետևանքով գյուղացիական տնտեսություններին պատճառված վնասների վերաբերյալ

| հ.հ. | Համայնքների անվանումը | Ընդամենը վնասված տարածքը /հա/ | Այդ թվում՝ խաղող, տարածություն /հա/ | Այդ թվում՝ խաղող, վնասվածության աստիճանը % | Այդ թվում՝ պտուղ, տարածություն /հա/ | Այդ թվում՝ պտուղ, վնասվածության աստիճանը % | Այդ թվում՝ բանջար, տարածություն /հա/ | Այդ թվում՝ բանջար, վնասվածության աստիճանը % | Այդ թվում՝ բոստան, տարածություն /հա/ | Այդ թվում՝ բոստան, վնասվածության աստիճանը % | Հողօգտագործողների թիվը | ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկից վերցրած վարկերի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* | *11* | *12* | *13* |
| 1 | Նորավան | **63.948** | 28.11 | 80 | 20.398 | 55 | 15.44 | 40 | | | 91 | 60.0 |
| 2 | Երասխահուն | **8.0** | | | | | 5.00 | 50 | 3.0 | 50 | 8 | |
| 3 | [illegible]ետաշեն | **584.605** | 58.805 | 70 | 162.87 | 60 | 308.93 | 70 | 54.0 | 70 | 357 | 288.748 |
| 4 | Տանձուտ | **238.94** | 26.09 | 50 | 20.86 | 50 | 134.11 | 70 | 57.88 | 70 | 349 | 380.0 |
| 5 | Արգինա | **177.15** | 17.35 | 75 | 159.8 | 80 | | | | | 33 | 8.45 |
| 6 | Բերքաշատ | **128.18** | 44.16 | 60 | 37 | 50 | 16.47 | 60 | 30.55 | 80 | 76 | 100.0 |
| 7 | Բագարան | **17.4** | | | 16 | 50 | 1.4 | 50 | | | 47 | |
| 8 | Նալբանդյան | **400** | 50 | 70 | 100 | 70 | 200 | 80 | 50 | 70 | 279 | 300 |
| 9 | Նոր Արտագերս | **240.94** | 30.49 | 60 | 82.34 | 60 | 102.61 | 65 | 25.5 | 70 | 209 | 40.44 |
| 10 | Արտաշար | **192.79** | | | | | 94.06 | 65 | 98.73 | 80 | 220 | 182.45 |
| 11 | Սարդարապատ | **144** | 68 | 40 | 16 | 35 | 56 | 35 | 4 | 35 | 111 | |
| 12 | Զարթոնք | **130.4** | | | | | 73.86 | 40 | 56.54 | 45 | 249 | 42.54 |
| 13 | Արազափ | **118.75** | 2.24 | 45 | | | 44.81 | 45 | 71.7 | 55 | 119 | 105.51 |
| 14 | [illegible]յգեշատ /Արմ./ | **129.33** | 33.28 | 50 | 40.67 | 50 | 40.98 | 50 | 14.4 | 50 | 311 | 300 |
| 15 | Արևիկ | **250.508** | 250.51 | 60 | | | | | | | 906 | |
| 16 | Արմավիր | **45** | 15 | 50 | 15 | 50 | 7 | 50 | 8 | 50 | 63 | 44.9 |
| 17 | Եղեգնուտ | **403.13** | 3.14 | 40 | 3.6 | 45 | 183.66 | 45 | 212.73 | 45 | 235 | 124.82 |
| 18 | Լուկաշին | **46.98** | 5.55 | 50 | 27.83 | 50 | 13.6 | 50 | | | 113 | 28.074 |
| 19 | Շենավան | **283.8** | 132.03 | 70 | 70.34 | 70 | 61.11 | 65 | 20.32 | 60 | 261 | 152.7 |
| 20 | Դաշտ | **46.32** | 4.2 | 50 | 13.2 | 50 | 28.22 | 50 | 0.7 | 50 | 143 | 34.0 |
| 21 | Արգավանդ | **246.58** | 75.23 | 63 | 12.8 | 55 | 57.35 | 53 | 101.2 | 53 | 348 | 314.7 |
| 22 | Ջանֆիդա | **796.72** | 8 | 50 | 115.21 | 70 | 408.99 | 60 | 264.52 | 60 | 821 | 430.0 |
| 23 | Ամբերդ | **125.4** | 75.79 | 65 | 23.03 | 65 | 26.58 | 65 | | | 146 | |
| 24 | Դողս | **74.1** | 20.79 | 60 | 22.02 | 60 | 22.49 | 60 | 8.8 | 60 | 220 | 40 |
| 25 | Փշատավան | **303** | 160 | 40 | 63 | 40 | 40 | 40 | 40 | 40 | 1001 | 258 |
| 26 | Այգեշատ /Էջմ./ | **58.64** | | | 13.75 | 55 | 44.89 | 55 | | | 79 | 27.63 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | 5254.611 | 1108.763 | 40-80 | 1035.718 | 35-70 | 1987.560 | 40-80 | 1122.570 | 35-80 | 6795 | 3262.962 |